Ինֆորմացիայի Ազատության կենտրոն ՀԿ
նախագահ՝ Շուշան Դոյդոյանին
ք.Երևան, Բյուզանդի ¼, 4-րդ հարկ
Էլփոստ. foi@foi.am
+37491407836

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հուլիսի 10-ի հարցմանը՝ հայտնումեմ, որ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում 2018թ. հուլիսի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ՝ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից Ամուլսարի ոսկեբերքվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու առերևույթ դեպքի առթիվ:

Քրեականգործի շրջանակներում Ամուլսարի հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի, իսկ մասնավորապես՝ Ամուլսարի ջրային ավազանի, Սպանդարյան-Կեչուտ ջրատար հիդրոտեխնիկական կառույցի, Սևանա լճի և Ջերմուկիհանքայինջրավազանիվրավնասակարազդեցությանռիսկերը, դրանց կանխարգելման նուղղված միջոցառումների հիմնավորվածությունը, ինչպես նաև ներկայացված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում արձանագրված հետազոտությունների հիմնավորվածությունը անկախ փորձագիտական գնահատմամբ պարզելու համար ՀՀ քննչական կոմիտեի կողմից 2018թ. նոյեմբերի 8-ին հայտարարվել է երկու փուլով միջազգային հավատարմագրված կազմակերպությունների նախարակավորման ընթացակարգ և իրականացվել մրցույթ, որի արդյունքներով մրցութային հանձնաժողովի կողմից նախապատվությունը տրվել է միջազգային Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերությանը: Վերջինս ներգրավվել է համալիր փորձաքննության իրականացմանը:Մրցույթի հայտարարությունը տեղադրվել է ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում՝ http://investigative.am/news/view/amulsar-porcagitakan-yntacakarg.html

Քրեական գործով նշանակվել է էկոլոգիական, երկրաբանական, հիդրոլոգիական, երկրաֆիզիկական, քիմիական, շինարարատեխնիկական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերության ներկայացրած փորձագետներին, վերջիններս քրեական գործով նշանակվել են փորձագետ: Փորձաքննության արդյունքներով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վարույթն իրականացնող մարմնին տրամադրվելու է համալիր փորձաքննության եզրակացություն:

Ամուլսարի ոսկեբերքվարցիտային հանքի շահագործման եւ հետշահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության ռիսկերիգնահատման եւ

կարևորագույն այլ հարցերի պարզաբանման նպատակով նշանակված համալիր փորձաքննության կազմակերպման, դրա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվել է ՀՀ ՔԿ պաշտոնական կայքում:

Հարկենք համարում նշել, որ Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերությունը համալիր փորձաքննության իրականացմանը ներգրավվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող վերընշված քրեական գործի շրջանակներում, հետեւաբար՝ դրա վերաբերյալ մանրամասներն ու տեղեկատվությունը համարվում են նախաքննության տվյալ եւ հրապարակման ենթակա չեն:Այնուհանդերձ սույն քրեական գործով նախաքննական գաղտնիք չհանդիսացող տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է ՀՀ ՔԿ պաշտոնական կայքում:

Համալիր փորձաքննության հետագա ընթացքի, արդյունքների և եզրակացության մասին հրապարակման ենթակա տեղեկատվությունը հետագայում ևս հրապարակվելու է ՀՀ ՔԿ պաշտոնական կայքում՝ հաշվի առնելով նախաքննության տվյալների գաղտնիության ռեժիմը:

Հարգանքով՝
կոռուպցիոն, սեփականության ուղղված
հանցագործությունների և կիբեռհանցագործությունների
քննության վարչության պետ՝

Յու.Իվանյան

+37495749820